ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 25/2 - Լ «08» 02 2022 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կառուցվածքային ստորաբաժանումների անմիջական ղեկավարում իրականացնելու նպատակով, ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 56-րդ կետի 11-րդ ենթակետով, 60-րդ կետով.

հրամայում եմ

1. Սահմանել, որ ԵՊՀ ներքոհիշյալ կառուցվածքային ստորաբաժանումները գործում են ԵՊՀ ռեկտորի անմիջական ղեկավարությամբ.

1) Միջազգային համագործակցության վարչություն,
2) Հաշվապահական հաշվառման վարչություն,
3) Ֆինանսական վերլուծությունների վարչություն,
4) Ֆակուլտետներ, ինստիտուտներ, Իջևանի մասնաճյուղ,
5) Իրավաբանական ծառայություն,
6) Որակի ապահովման կենտրոն,
7) Մշակույթի կենտրոն,
8) Շրջանավարտների և կարիերայի կենտրոն,
9) Ռուսական կենտրոն,
10) Հրատարակչություն,
11) Անձնակազմի կառավարման բաժին,
12) Հատուկ բաժին,
13) Ընդհանուր բաժին,
14) Արխիվ,
15) Համահամալսարանական ամբիոններ,
16) Ուսումնաարտադրական բազաներ և ուսումնափորձնական տնտեսություն,
17) ԵՊՀ-ի կողմից հիմնադրված տնտեսական ընկերություններ:

2. ԵՊՀ ներքոհիշյալ կառուցվածքային ստորաբաժանումների անմիջական ղեկավարումը հանձնարարել.

2.1) Ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորին.

ա. Ուսումնամեթոդական վարչություն,
բ. Շարունակական կրթության կենտրոն,
գ. Ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոն,
դ. Դոկտորական կրթության կենտրոն,
ե. Կրթական ծրագրեր իրականացնող կենտրոններ,
զ. Ֆակուլտետներ, ինստիտուտներ, կենտրոններ, Իջևանի մասնաճյուղ՝ ուսումնական գործընթացի հետ կապված հարցերով:

2.2) Գիտական հարցերի գծով պրոռեկտորին.

ա. Գիտական քաղաքականության վարչություն,
բ. Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն,
գ. Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոն,
դ. Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան,
ե. Գիտահետազոտական գործունեություն իրականացնող ստորաբաժանումներ,

զ. Ֆակուլտետներ, ինստիտուտներ, կենտրոններ, Իջևանի մասնաճյուղ՝ գիտական հարցերով:

2.3) Զարգացման և նորարարությունների գծով պրոռեկտորին.

ա. Հանրային կապերի և մարքեթինգի վարչություն,

բ. Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն,

գ. Ռազմավարական պլանավորման կենտրոն,

դ. Լ. Ղարիբջանյանի անվան պատմության թանգարան,

ե. Ֆակուլտետներ, ինստիտուտներ, կենտրոններ, Իջևանի մասնաճյուղ՝ զարգացման և նորարարական ծրագրերի համակարգման հարցերով:

2.4) Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորին.

ա. Գնումների պլանավորման վարչություն,

բ. Հակահրդեհային ծառայություն,

գ. Տնտեսական գործունեության կազմակերպման և վերահսկման բաժին,

դ. Էներգետիկ համակարգի շահագործման բաժին,

ե. Տարածքի բարեկարգման և կանաչապատման բաժին,

զ. Բուժկետ,

է. Հյուրերի տուն,

ը. Ավտոպարկ,

թ. Կաթսայատուն,

ժ. Արհեստանոցներ,

ժա. Ուսանողական հանրակացարան,

ժբ. Ֆակուլտետներ, ինստիտուտներ, կենտրոններ, Իջևանի մասնաճյուղ՝ ընդհանուր հարցերով:

3. Լիազորել.

3.1) ԵՊՀ ակադեմիական/ուսումնական գծով պրոռեկտորին՝ սույն հրամանի 2.1.-րդ կետում նշված կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն աշխատանքը կազմակերպելու նպատակով ընդունելու անհատական իրավական ակտեր (հրամաններ), այդ թվում՝ ուսանողների նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու, նույն կուրսում թողնելու, համալսարանից հեռացնելու և ուսումնական գործընթացին առնչվող այլ հարցերի վերաբերյալ, բացառությամբ նշված ստորաբաժանումների աշխատողներին աշխատանքի ընդունելու, ազատելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ անհատական իրավական ակտերի:

3.2) ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտորին՝ սույն հրամանի 2.2.-րդ կետում նշված կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն աշխատանքը կազմակերպելու նպատակով ընդունելու անհատական իրավական ակտեր (հրամաններ), բացառությամբ նշված ստորաբաժանումների աշխատողներին աշխատանքի ընդունելու, ազատելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ անհատական իրավական ակտերի:

3.3) Զարգացման և նորարարությունների գծով պրոռեկտորին՝ սույն հրամանի 2.3.-րդ կետում նշված կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն աշխատանքը կազմակերպելու նպատակով ընդունելու անհատական իրավական ակտեր (հրամաններ), բացառությամբ նշված ստորաբաժանումների աշխատողներին աշխատանքի ընդունելու, ազատելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ անհատական իրավական ակտերի:

3.4) ԵՊՀ ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորին՝ սույն հրամանի 2.4.-րդ կետում նշված կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն աշխատանքը կազմակերպելու նպատակով ընդունելու անհատական իրավական ակտեր (հրամաններ), այդ թվում՝ գնման գործընթացի կազմակերպման վերաբերյալ ակտեր (ստորագրելու գնման պայմանագրեր), բացառությամբ նշված ստորաբաժանումների աշխատողներին աշխատանքի ընդունելու, ազատելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ անհատական իրավական ակտերի:

4. Սույն հրամանի 1-ին կետի 13-17-րդ ենթակետերում նշված կառուցվածքային ստորաբաժանումների ընթացիկ աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը վերապահել ռեկտորի աշխատակազմի ղեկավարին:

5. Ուժը կորցրած ճանաչել Երևանի պետական համալսարանի ռեկտորի 2019 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 165/199 հրամանը (լրացումներով և փոփոխություններով):

6. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ պրոռեկտորներին, ռեկտորի աշխատակազմի ղեկավարին և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ